10.07.23 - 10.07.23
14:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի Ռոբերտ Շումանի անվան սրահ

Ս.թ. հուլիսի 10-ին՝ ժամը 14:00-ին, ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի Ռոբերտ Շումանի անվան սրահում կմեկնարկի «Ապաստանը և մարդու իրավունքները» խորագրով առցանց դասընթացների շարքը։

ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) գրասենյակի և Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության շրջանակում իրականացնելու է «Ապաստանը և մարդու իրավունքները» խորագրով առցանց դասընթացի պիլոտային փուլը։

Դասընթացը ներառում է այնպիսի թեմաներ, ինչպիսիք են կյանքի իրավունքի ու վատ վերաբերմունքի արգելման հարաբերակցությունը, միգրացիոն կալանքը և ապաստան հայցողների ընդունման պայմանները, ընտանեկան կյանքի իրավունքը և ապաստանը, ինչպես նաև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը։

Դասընթացին մասնակցելու են պետական մարմինների, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am